ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետությունն ունի արտոնյալ առևտրի համաձայնագրեր մի շարք երկրների հետ՝

Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքիայի միջև

Այս համաձայնագիրը ստորագրվել է 2014 թվականի հունվարի 29-ին: Ըստ այդ համաձայանգրի՝ կողմերը փոխանակել են այն սակագնային դիրքերը, որոնց վերաբերյալ նրանք գնացել են փոխզիջումների: Իրանի Իսլամական Հանրապետությունը ներառել է 60 ապրանքատեսակ /125 սակագնային դիրքեր՝ հիմնված ութանիշ դասակարգման/:

Իրանի Իսլամական Հանրապետության և Պակիստանի միջև

Այս համաձայնագիրը ստորագրվել է 2006 թվականին: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը Պակիստանին արտոնություններ է տրամադրել 309 սակագնային դիրքերի մասով /6-նիշ դասակարգման/:

Իրանի Իսլամական Հանրապետության և Թունիսի միջև

Այս համաձայնագիրը ստորագրվել է 2007 թվականին: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը Թունիսին արտոնություններ է տրամադրել 268 սակագնային դիրքերի մասով /8-նիշ դասակարգման/:

Իրանի Իսլամական Հանրապետության և Կուբայի միջև

Այս համաձայնագիրը ստորագրվել է 2008 թվականին: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը Կուբային արտոնություններ է տրամադրել 44 սակագնային դիրքերի մասով /8-նիշ դասակարգման/:

Իրանի Իսլամական Հանրապետության և Սիրիայի միջև

Այս համաձայնագիրը ստորագրվել է 2008 թվականին: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը առանձնացրել է 88 սակագնային դիրքեր, որոնց մասով զիջումներ չեն կատարվել:

Իրանի Իսլամական Հանրապետության և Բոսնիա և Հերցեգովինայի միջև

Այս համաձայնագիրը ստորագրվել է 2009 թվականին: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը Բոսնիային արտոնություններ է տրամադրել 170 սակագնային դիրքերի մասով /6-նիշ դասակարգման/:

Իրանի Իսլամական Հանրապետություն ունի արտոնյալ համաձայնագրեր նաև Իսլամական ութնյակի /Բանգլադեշ, Եգիպտոս, Ինդոնեզիա, Մալազիա, Նիգերիա, Պակիստան, Թուրքիա/, ինչպես նաև Ուզբեկստանի Հանրապետության հետ:

❗ Իրանի Իսլամական Հանրապետություն սննդամթերք արտահանելիս անհրաժեշտ է ԻԻՀ-ում ունենալ պաշտոնական ներկայացուցիչ, որը կներկայացնի տվյալ արտադրանքը:

Ներկայացուցիչը յուրաքանչյուր ապրանքատեսակի համար լրացնում է PMF (Product Manufacturing Facility) ֆայլը, որտեղ նշվում է արտադրանքի մասին մանրամասն տեղեկատվություն: Նշված փաստաթուղթը լրացնելուց հետո, ապրանքի ներմուծման ամբողջ փաթեթը ԻԻՀ-ի կողմից լիցենզավորված տեխնիկական փորձագետի միջոցով ներկայացվում է ԻԻՀ-ի առևտրի և առողջապահության նախարարությանը՝ տվյալ ապրանքի ԻԻՀ ներմուծման թույլտվություն ստանալու համար: Կենդանական ծագում ունեցող արտադրանքը Իրան ներմուծելու ժամանակ պահանջվում է նաև «Հալալ» սննդամթերքի գրասենյակի կողմից տրամադրվող սերտիֆիկատ, իսկ արդյունաբերական արտադրանքի համար պահանջվում է Ստանդարտների ազգային կենտրոնի կողմից տրամադրվող սերտիֆիկատ:

❗ Կարևոր է նշել, որ միջազգային առևտրի զարգացման «Համաշխարհային հալալ» կազմակերպությունն արդեն Հայաստանում է: Միջազգային տնտեսության մեջ իր տեղը գտած և տարեկան շուրջ երկու հազար միլիարդ դոլար սննդամթերքի առևտրի ծավալներ ունեցող «Հալալ» կազմակերպության սերտիֆիկացումն արդեն հասանելի է հայ տնտեսվարողներին հենց Հայաստանում:

Հարկ է նշել, որ սննդամթերք ներմուծելու իրավունք ստացած ընկերությունները 3 տարվա ընթացքում առնվազն 1 անգամ ենթարկվում են իրանական կողմից անցկացվող աուդիտին /CMP/:

Յուրաքանչյուր արտադրանքի տեսակի համար արտահանող կողմը պետք է վճարի ֆիքսված գումար:

Իրանի Իսլամական Հանրապետության ներմուծման և արտահանման, ինչպես նաև մաքսային ձևակերպումների մասին ընդհանուր տեղեկությանը կարող եք ծանոթանալ այստեղ՝

http://open-iran.com/wp-content/uploads/2017/08/Guide-to-Import-Export.pdf

[Ներմուծման, արտահանման և մաքսային ձևակերպումների ուղեցույց]

Իրանի Իսլամական Հանրապետություն Երրորդ երկրներից ներմուծման ժամանակ գործող մաքսատուրքերը ներկայացված են հետևյալ հղումով՝

http://eng.tpo.ir/index.aspx?siteid=5&fkeyid=&siteid=5&pageid=24256

[Իրանի առևտրի խթանման կազմերպություն]

Հայաստանը, լինելով ԵԱՏՄ անդամ, ունենալով առևտրի արտոնյալ ռեժիմ ԵՄ հետ և ընդհանուր սահման ԻԻՀ հետ, ունենալով միջազգային վարկանիշներով հաստատված գրավիչ ներդրումային և գործարար միջավայր, ԻԻՀ հետ ունենալով սահմանակից ազատ տնտեսական գոտի՝ կարող է լուրջ հետաքրքրություն ներկայացնել Հայաստանում արտահանման կողմնորոշում ունեցող արտադրություն կազմակերպելու, Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված առևտրային և լոգիստիկ հնարավորություններն օգտագործելու համար:

Հարկ է նշել նաև, որ հայկական «Մեղրի» և իրանական «Արաս» ազատ տնտեսական գոտիների գործակցությունը և հայ-իրանական արտահանման-ներմուծման համատեղ ընկերության ստեղծումը կարող է երկկողմ տնտեսական հարաբերություններն որակապես նոր մակարդակի բարձրացնել:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առևտրաշրջանառությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ 2016 թվականին կազմել է 238.8 մլն. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 14.7%-ով (2015 թվականին կազմել է 280.1 մլն.ԱՄՆ դոլար): 2016 թվականին արտահանումը Հայաստանի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն կազմել է 74.8 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 8.4%-ով (2015 թվականին կազմել է 81.7 մլն.ԱՄՆ դոլար): 2016 թվականին Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, ըստ ծագման երկրի հատկանիշի, կազմել է 164.0 մլն.ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 17.3%-ով (2015 թվականին կազմել է 198.3 մլն.ԱՄՆ դոլար), ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծումը կազմել է 151.1 մլն.ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 17.2%-ով (2015 թվականին կազմել է 182.4 մլն.ԱՄՆ դոլար):

Անհրաժեշտ է նաև նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի հիմնական գործընկերների ցանկում 2016 թվականի դրությամբ զբաղեցրել է 5-րդ տեղը:

2016 թվականին Հայաստանի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **Էլեկտրաէներգիա**
- **Ոչխարի կամ այծի միս**

- **Անտառանյութ**
- **Ալյումինե թափոն և ջարդոն**
- **Շոկոլադ**
- **Հրուշակեղեն**

2016 թվականին Հայաստանի Հանրապետություն Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **Բնական և հեղուկ գազ**
- **Էթիլենի պոլիմերներ**
- **Սուլֆիդներ և բազմասուլֆիդներ**
- **Նավթ, նավթամթերք**
- **Հանքային կամ քիմիական պարարատանյութեր**
- **Կոքս, բիտում**
- **Երկաթահամահալվածք**

ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=3&cad=rja&uact=8&ved=0ahUKEwiY6uWY-6bYAhVDApoKHdwDDC8QFggyMAI&url=http%3A%2F%2Fen.mimt.gov.ir%2Fweb_directory%2F34779-Foreign-Investment-Promotion-and-Protection-Act-FIPPA.html&usg=AOvVaw0MSEoLFNHv3O7iypgi2HOb

[Օտարերկրյա ներդրումների խթանման և պաշտպանության օրենսդրությունը և դրանց իրականացման կանոնակարգումը]

http://www.investiniran.ir/en/investmentguide/sevicecenter

[ԻԻՀ ներդրումների տնտեսական և տեխնիկական աջակցության կազմակերպություն]

https://www.nzte.govt.nz/-/media/NZTE/Downloads/Export-Assistance/Market-guides/Iran-market-guide.pdf

[Իրանական շուկայի վերաբերյալ ուղեցույց]